



ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.

2021թ. Տարածաշրջանային և գյուղական հրատարակություն

Լոս Անջելեսի ողջ վարչաշրջանի Զբոսայգիների և հանգստի վայրերի կարիքների՝ 2016թ.-ին ավարտած գնահատումն ուսումնասիրություն է, որն օգնել է պատասխանել հետևյալ հարցերին.:

- » Որտե՞ղ են ամենից անհրաժեշտ նոր զբոսայգիներ:
- » Որո՞նք են զբոսայգիների առաջնահերթ ծրագրերը յուրաքանչյուր ուսումնասիրության գոտու համար:
- » Ի՞նչ վիճակում է յուրաքանչյուր զբոսայգում գտնվող յուրաքանչյուր հարմարություն, և դրանցից ո՞րը պետք է արդիականացվի:
- » Որքա՞ն է նոր զբոսայգիների զարգացման և առկա զբոսայգիների բարելավման մոտավոր ընդհանուր արժեքը՝ համայնքի կարիքները բավարարելու համար:

Այժմ Լոս Անջելես վարչաշրջանի Զբոսայգիների վարչությունը աշխատում է **Տարածաշրջանային և գյուղական հրատարակության** վրա: Սա Զբոսայգիների կարիքների գնահատման թարմացում է: Այն կենտրոնանում է տարածաշրջանային կառույցների և գյուղական համայնքների վրա:



Տարածաշրջանային կառույցների, այդ թվում՝ տարածաշրջանային զբոսայգիների, լողափերի և լճերի, արահետների, բնական տարածքների և բաց տարածությունների անհրաժեշտություն:



Զբոսայգիների կարիքը **գյուղական** համայնքներում, որոնք հիմնականում գտնվում են Անտելոպի հովտում, Սանտա Կլարիտա հովտում և Սանտա Մոնիկա լեռներում:

Ինչո՞ւ է սա կարևոր:

Մենք ուզում ենք ավելի լավ հասկանալ և փաստագրել տարածաշրջանային և գյուղական զբոսայգիների և հանգստի վայրերի կարիքները: Սա կօգնի պլանավորել ու ֆինանսավորել վարչաշրջանի առկա և ապագա հաստատությունները՝ վարչաշրջանի կարիքները բավարարելու համար:

Նաև, այժմ այս ուսումնասիրությունն իրականացնելու համար լավ ժամանակ է, քանի որ բացօթյա հասարակական տարածքները շատ տարածված են դարձել COVID-19 համաճարակի ժամանակ: Մասնավորապես, շատ մարդիկ հանգստանալու և լիցքաթափվելու նպատակով այցելում են լողափեր, զբոսայգիներ, արահետներ, բնական տարածքներ և այգիներ:

Ո՞վ կարող է ներգրավվել:

- » Դուք՝ Լոս Անջելես վարչաշրջանի բնակիչները: Մասնակցության կիրավորվեն վարչաշրջանի բոլոր համայնքները, ներառյալ քաղաքները և չներգրավված տարածքները:
- » Տեղական գործակալությունները և համայնքում հիմնված կազմակերպությունները կօգնեն առցանց հանդիպումների, հարցումների, ֆոկլուս խմբերի, հարցազրույցների ժամանակ և COVID-ի անվտանգ իրազեկման այլ գործընթացներում:
- » Այս ջանքերը ղեկավարում է Լոս Անջելես վարչաշրջանի Զբոսայգիների վարչությունը:
- » Տեխնիկական խորհրդատվական կոմիտեն (Technical Advisory Committee, TAC) կօգնի ղեկավարել և տեղեկացնել ծրագրի հիմնական ասպեկտների մասին: TAC-ում ներգրավված են լողափերի, զբոսայգիների, հանրային առողջության, տարածաշրջանային պլանավորման, փոխադրումների, բաց տարածությունների և պահպանության, կայունության և քարտեզագրման ոլորտներում փորձ ունեցող ներկայացուցիչներ:



Որո՞նք են ուսումնասիրության գոտիները:


ՏԱՐԱԾԱՉՐՋԱՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Տարածաշրջանային ուսումնասիրության 11 գոտիները հիմնված են Լոս Անջելես վարչաշրջանի Գլխավոր պլանում հաստատված պլանավորման տարածքների վրա, որն ընդունվել է 2015թ.-ին Վերատուգիչ խորհրդի կողմից:





ԳՅՈՒԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Գյուղական ուսումնասիրության 14 գոտիներն ընդգրկում են Անտոլոպի հովտի, Մանտա Կլարիտա հովտի, Մանտա Մոնիկա լեռների և Մանտա Կատալինա կղզու համայնքները: Ուսումնասիրության այս գոտիները հիմնված են հողերի օգտագործման ծրագրերի և Գլխավոր հատակագծում և պլանավորման այլ փաստաթղթերում սահմանված տարածքների սահմանների վրա:



Ի՞նչ է ընդգրկվելու վերլուծության մեջ:

- » Լողափեր և լճեր
- » Բնական տարածքներ և բաց տարածություններ
- » Տարածաշրջանային զբոսայգիներ
- » Արահետներ
- » Դենդրարիումներ և բուսաբանական այգիներ
- » Գյուղական ուսումնասիրության գոտիներում ներառված զբոսայգիներ և հանգստի վայրեր



Ե՞րբ է իրականացվելու Տարածաշրջանային և գյուղական հրատարակությունը:

աշուն 2021 թ

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Sean Woods, Chief of Planning | swoods@parks.lacounty.gov

Clement Lau, AICP, Departmental Facilities Planner | clau@parks.lacounty.gov

Այցելեք www.lacountyparkneeds.org կայքը



@lacparkneeds

